ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2024թ. **N_____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի «Երևան քաղաքի առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներն ու շնորհման կարգը սահմանելու մասին» N 194-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին կետում «(N 1 և N 2 Աղյուսակ)» բառերը փոխարինել «(N 1, N 2 և N 2.1 Աղյուսակ)» բառերով.

2) 2-րդ կետը լրացնել նոր 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների վրա:».

3) 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետի իմաստով կազմակերպություն են համարվում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կատարելու իրավունք ունեցող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը կամ ֆիզիկական անձինք:».

4) 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Չափորոշիչներով որակի աստիճան շնորհելու նպատակն է Երևան քաղաքում գործող առևտրի օբյեկտների, հանրային սննդի պատրաստման և իրացման օբյեկտների, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների որակական տարբերակումն ու հավաստագրումը, հնարավորության ընձեռումը սպառողներին կատարելու չափելի ընտրություն և համեմատում, ինչպես նաև նպաստելու փոքր ու միջին բիզնեսի ասպարեզում ծառայությունների մատուցման շահագրգիռ կատարելագործմանը և բիզնեսի զարգացմանը, մրցակցային դաշտի կայացմանը և զբոսաշրջիկության զարգացմանը:».

5) 4-րդ կետում «Որակավորման գործընթացին մասնակցելու դիմումը» բառերը փոխարինել «Սույն կարգի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում որակավորման գործընթացին մասնակցելու դիմումը» բառերով.

6) 4-րդ կետից հետո լրացնել նոր 4.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքում որակավորման գործընթացին մասնակցելու դիմումը ուղղվում է Երևանի քաղաքապետին, որին կից ներկայացվում են՝

1) կազմակերպության դեպքում՝ պետական ռեգիստրի վկայականի պատճենը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վկայականի պատճենը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) սույն կարգի N 3 աղյուսակում նշված չափորոշիչներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր (մեկից ավելի ավտոմոբիլների դեպքում՝ բոլոր ավտոմոբիլների և դրանց վարորդների համար).

3) տեղական վճարի վճարման անդորրագրի պատճենը:».

7) 5-րդ կետը լրացնել նոր 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների դեպքում՝

ա. ճանապարհային երթևեկության կանոնների պահպանումը.

բ. վարորդի (վարորդների) առողջական վիճակը.

գ. ավտոմոբիլի տեսակը, թողարկման տարեթիվը, տարիքը:».

8) 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Պարենային և ոչ պարենային ապրանքների առևտրի օբյեկտներին, առևտրի կենտրոններին, հանրային սննդի պատրաստման և իրացման կազմակերպություններին (ռեստորան, բար, սրճարան), մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին որակի աստիճանի շնորհումը կատարվում է դրանց վերաբերող չափորոշիչներին տրված բալային արժեքների հանրագումարով (N 3 Աղյուսակ):».

9) N 2 աղյուսակից հետո լրացնել նոր N 2.1-ին աղյուսակ՝ համաձայն N 1 հավելվածի.

10) N 3 աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին որակի աստիճաններ շնորհելու գործընթացը կազմակերպելու համար ստեղծել համապատասխան հանձնաժողով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
--------- թվականի ----------ի
N -Ն որոշման

«Աղյուսակ N 2.1

Չափորոշիչներ

Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների որակավորման աստիճանների

	Չափորոշիչ	
1.	Դիմումի ներկայացման պահին նախորդող տարվա ընթացքում տվյալ ավտոմոբիլի հաշվառման համարանիշով (մեկից ավելի ավտոմոբիլների դեպքում՝ բոլոր ավտոմոբիլների հաշվառման համարանիշներով) ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար ընդունված վարչական ակտեր (բացառությամբ, եթե դատական կարգով վիճարկվում է ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար ընդունված վարչական ակտը)	0-5
2.	հիբրիդային կամ էլեկտրականությամբ սնուցվող շարժիչներով աշխատող մարդատար-տաքսի ավտոմոբիլի (ավտոմոբիլների) առկայություն	0-5
3.	Ուղևորափոխադրումներ իրականացնող մարդատար-տաքսի ավտոմոբիլների առկայություն, որոնք տարիքը չի գերազանցում 10 տարին	0-5
4.	Վարորդի (վարորդների) նախնական և պարբերական բժշկական զննության առկայություն	0-5
	Առավելագույն բալերի հանրագումարը	**20**

»:

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
--------- թվականի ----------ի
N -Ն որոշման

«Աղյուսակ N 3

Բալային միջակայք

Որակավորման դասը	Առևտրի ոլորտի կազմակերպություններ			Հանրային սննդի պատրաստման և իրացման կազմակերպություններ			Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններ
	Առևտրի կենտրոն	Պարենային ապրանքների առևտրի օբյեկտ	Ոչ պարենային ապրանքների առևտրի օբյեկտ	Ռեստորան	Բար	Սրճարան	Կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ
Որակի բարձրագույն աստիճան	86-90 բալ ներառյալ	77-81 բալ ներառյալ	71-75 բալ ներառյալ	125-129 բալ ներառյալ	113-117 բալ ներառյալ	116-120 բալ ներառյալ	16-20 բալ ներառյալ
Որակի առաջին աստիճան	81-85 բալ ներառյալ	72-76 բալ ներառյալ	66-70 բալ ներառյալ	120-124 բալ ներառյալ	108-112 բալ ներառյալ	111-115 բալ ներառյալ	10-15 բալ ներառյալ

»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N 194-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) կարգավորված են Երևան քաղաքի առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներն ու շնորհման կարգը:

Որոշմամբ նախատեսված կարգավորումները ներկայումս տարածվում են առևտրի կազմակերպությունների՝ փաստացի հասցեում գործող, առանձին միավոր հանդիսացող պարենային ապրանքների վաճառքի օբյեկտների, ոչ պարենային ապրանքների վաճառքի օբյեկտների և առևտրի կենտրոնների վրա, հանրային սննդի կազմակերպությունների՝ փաստացի հասցեում գործող, առանձին միավոր հանդիսացող օբյեկտների (ռեստորան, բար, սրճարան) վրա:

Չափորոշիչներով որակի աստիճան շնորհելու նպատակն է Երևան քաղաքում գործող առևտրի օբյեկտների և հանրային սննդի պատրաստման և իրացման օբյեկտների որակական տարբերակումն ու հավաստագրումը, հնարավորության ընձեռումը սպառողներին կատարելու չափելի ընտրություն և համեմատում, ինչպես նաև նպաստելու փոքր ու միջին բիզնեսի ասպարեզում ծառայությունների մատուցման շահագրգիռ կատարելագործմանը և բիզնեսի զարգացմանը, մրցակցային դաշտի կայացմանը և զբոսաշրջիկության զարգացմանը:

Գործող կարգով սահմանված չեն մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներն ու շնորհման կարգը:

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի համաձայն՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլը՝ թեթև մարդատար ավտոմոբիլ է, որի միջոցով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, իրականացվում է սպասարկման ծառայությունների մատուցում: Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումները (տաքսամոտորային փոխադրումները) կազմակերպվում են բնակչությանը կամ կազմակերպություններին ծառայություններ մատուցելու նպատակով:

Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումներ կարող են կատարել տվյալ փոխադրումների և տեխնիկական վիճակի պահանջներին համապատասխան ավտոտրանսպորտային միջոցներ ունեցող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը կամ ֆիզիկական անձինք՝ լիցենզիայի առկայության դեպքում:

Նախագծով նախատեսվում է սահմանել մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների որակավորման

աստիճանների չափորոշիչները, իսկ դրանց որակի աստիճանի շնորհումը կատարել դրանց վերաբերող չափորոշիչներին տրված բալային արժեքների հանրագումարով:

Նախագծով նախատեսվում է սահմանել, որ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների որակի աստիճան շնորհելիս դիտարկվում են՝ ճանապարհային երթևեկության կանոնների պահպանումը, վարորդի (վարորդների) առողջական վիճակը, ավտոմոբիլի տեսակը, թողարկման տարեթիվը, տարիքը:

Ըստ առաջադրված չափորոշիչների շնորհվելու է որակի աստիճան, որոնց հիման վրա որակավորման աստիճան ստացած մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ) համար Երևանի քաղաքի ավագանու առանձին որոշումներով կիրառվելու են մի շարք արտոնություններ՝ նպատակ ունենալով բարձրացնելու մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումների կազմակերպման որակն ու անվտանգությունը, նպաստելու փոքր ու միջին բիզնեսի ասպարեզում ծառայությունների մատուցման շահագրգիռ կատարելագործմանը և բիզնեսի զարգացմանը, մրցակցային դաշտի կայացմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ